ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ
ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Կորեայի Հանրապետության քաղաքացի, ԵՊՀ մագիստրանտ Յուսանգ Հանի՝ ընդդեմ «5-րդ ալիք» հեռուստաընկերության ներկայացրած դիմումի կապակցությամբ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2026թ. հունվարի 7-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին (ԴՄ) է դիմել Կորեայի Հանրապետության քաղաքացի, Երեւանի պետական համալսարանի մագիստրանտ եւ հետազոտող Յուսանգ Հանը (Yoosang Han)՝ բողոքելով «5-րդ ալիք» հեռուստաընկերության «Հայլուր» լրատվական ծրագրի 2026թ. հունվարի 6-ի թողարկման մեջ, իր գնահատմամբ, տեղ գտած էթիկական խախտումների վերաբերյալ: «*Իմ պատկերն ու դեմքը օգտագործվել են քաղաքական մանիպուլյացիայի նպատակով եւ թիրախավորվել են վիրավորական համատեքստում («քարավան», «ուղտեր»), ինչը հանգեցրել է իմ դեմ ուղղված ռասիստական հարձակումների եւ ատելության խոսքի տարածմանը սոցիալական ցանցերում*»,- դիմումի մեջ նշել է Հանը: Նա դիմումին կցել է խնդրահարույց տեսանյութերը (1, 2), խնդրի հետ կապված իր ֆեյսբուքյան գրառումը եւ այդ գրառման ներքո «5-րդ ալիքի» մեկնաբանությունը: Դիմումատուն խնդրում է դեպքը քննել ոչ թե որպես տեխնիկական սխալ, այլ որպես մարդու արժանապատվության դեմ ուղղված դիտավորյալ մեդիա հարձակում: Դիմումատուն Դիտորդ մարմնին տեղեկացրել է նաեւ, որ խնդրի առնչությամբ դիմել է Մոսկվայում Կորեայի դեսպանություն եւ ՀՀ իրավապահ մարմիններին:
2. Դիտորդ մարմինը քննության է առել դիմումը եւ գրավոր դիմել է «5-րդ ալիք» հեռուստաընկերությանը՝ հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու համար: Ի պատասխան՝ հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հարություն Հարությունյանը պատրաստակամություն է հայտնել մասնակցելու ԴՄ նիստին եւ անձամբ պատասխանելու ԴՄ անդամների հարցերին: ԴՄ 2026թ. հունվարի 14-ի նիստի ընթացքում Հարությունյանը կրկնել է ավելի վաղ Յուսանգ Հանի ֆեյսբուքան գրառման ներքո հեռուստաընկերության անունից արված պարզաբանումը, որ ռեպորտաժում Հանի անձը որեւէ

կերպ չի թիրախավորվել, որ ՀԸ տեսախցիկը նրան կադրի մեջ է առել հանրային միջոցառմանը մասնակցող հարյուրավոր այլ անձանց հետ։ Հարությունյանը տեղեկացրել է, որ հարցի կապակցությամբ հեռուստաընկերության էթիկայի հանձնաժողովը նույնպես նիստ է գումարել, որի ընթացքում ռեպորտաժի հեղինակ լրագրողին եւ օպերատորին ուղղված հարցին՝ քննարկվող հավաքի ընթացքում որեւէ մեկը, մասնավորապես՝ Յուսանգ Հանը խնդրե՞լ է չնկարահանել կամ եթեր չհեռարձակել իր մասնակցությամբ կադրերը, բացասական պատասխան է ստացել։

3. Դիտորդ մարմինն ուսումնասիրել է դիմումատուի ներկայացրած տեսանյութերը եւ պարզել է, մասնավորապես, որ առաջին տեսանյութի 00:05 րոպեին կադրում երեւում է բազմության մեջ կանգնած Յուսանգ Հանը, ուղեկցող տեքստում ռեպորտաժի անոնսն է. «Փաշինյանի կրոնական քարավանի երթը՝ կարգալույծ քահանաներով, «Դուխով» կեպկաները խաչով փոխարինած մարդկանցով ու մեգա-խաչով»։ Դիմումատուի ներկայացրած երկրորդ տեսանյությում իր մատնանշած 2:47 րոպեին եւս տասնյակ այլ մարդկանց շարքում երեւում է Յուսանգ Հանի պատկերը, ուղեկցող տեքստում լրագրողը խոսում է միջոցառման մասնակիցների մասին. «… Փաշինյանի ելույթը լսում են հիմնականում կարկառուն ՔՊ-ականներ, նրա զուգընկերուհին, կարգալույծ քահանաներ, «Դուխով» կեպկաները խաչով փոխարինած մարդիկ…»։ Ընդ որում, նույն կադրում, որտեղ երեւում է Հանը, կարմիր շրջանակի մեջ վերցված է միջոցառման մեկ այլ մասնակցի գլխարկի վրա պատկերված խաչը։ ԴՄ-ն ուսումնասիրել է նաեւ «5-րդ ալիքի» ֆեյսբուքյան եւ յութուբյան ալիքների համապատասխան տեսանյութերի տակ արված մեկնաբանությունները։

4. Դիտորդ մարմինն ուսումնասիրել է դիմումատուի ներկայացրած լրացուցիչ փաստաթղթերը, մասնավորապես Էդուարդ Մկրտչյան (Eduard Mkrtchyan) անվամբ ֆեյսբուքյան օգտատիրոջ՝ հունվարի 6-ին կատարած գրառումը, որտեղ նա տարածել է TV5-ի խնդրո առարկա ռեպորտաժից արված լուսապատճենը, որտեղ կարմիրով շրջանակի մեջ է վերցված Յուսանգ Հանի պատկերը՝ կից գրությամբ. «Նիկոլին միացավ նաեւ Չինաստանի առաջնորդը))»։ Գրառման ներքո բազմաթիվ ծաղրական եւ ռասայական խտրականություն պարունակող մեկնաբանություններ կան։ Էդուարդ Մկրտչյանը «5-րդ ալիքի» աշխատակից չէ։

Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն**
Հոդված 44. Հավաքների ազատությունը
1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու եւ դրանք կազմակերպելու իրավունք:

II. **«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք**
Հոդված 6. Հավաքներին մասնակցելու իրավունքը

1. Հավաքներին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք (Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք):
3. Հավաքի մասնակից է այն անձը, որը հավաքի անցկացման ժամանակ գտնվում է հավաքի վայրում՝ հավաքին մասնակցելու նպատակով:
4. Հավաքի մասնակից չեն հավաքի անցկացման վայրում հավաքի անցկացման ժամանակ իրենց լիազորություններն իրականացնելու կամ աշխատանքային պարտականությունները կատարելու, ստեղծագործական գործունեություն կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ գործունեություն իրականացնելու նպատակով գտնվող անձինք, ինչպես նաեւ հավաքի լուսաբանման նպատակով ներկա գտնվող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

III. **Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

5. Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների եւ համամարդկային արժեքների նկատմամբ
Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝
5.1. Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով:
5.2. Որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռային եւ լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

IV. **ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգ**

5.3. Ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չհանդիսացող ԶԼՄ-ների հրապարակումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել տվյալ լրատվամիջոցի համաձայնության դեպքում: Այսուհանդերձ, տվյալ ԶԼՄ-ի համաձայնության բացակայության դեպքում ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում ԻՆ ոչ անդամների հրապարակումների վերաբերյալ բողոքների քննությունից հետո ընդունել եւ հրապարակել փորձագիտական կարծիք կամ հայտարարություն:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը,

առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, Լրատվամիջոցների ու լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով եւ Դիտորդ մարմնի աշխատակարգով, ուսումնասիրելով ընդդեմ «5-րդ ալիք» հեռուստաընկերության Կորեայի

Հանրապետության քաղաքացի, ԵՊՀ մագիստրանտ Յուսանգ Հանի (Yoosang Han) ներկայացրած դիմումը՝ կից փաստաթղթերով, դիմումի վերաբերյալ պարզաբանումներ ստանալով «5-րդ ալիք» հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հարություն Հարությունյանից՝

արձանագրում է.

- «5-րդ ալիք» հեռուստաընկերությունը «Հայլուր» լրատվական ծրագրի 2026թ. հունվարի 6-ի թողարկման ժամանակ եթեր հեռարձակված ռեպորտաժում էթիկական սկզբունքների խախտում չկա այն իմաստով, որ դրանում լրատվամիջոցի կողմից դիմումատու Յուսանգ Հանի անձը թիրախավորելու միտում չի եղել, դիմումատուի պատկերը չի նույնականացվել հատուկ ձայնային կամ վիզուալ միջոցներով, նրա դեմքը ցուցադրվել է հանրային հավաքի բազմաթիվ այլ մասնակիցների (ներկաների) շարքում: Այս առումով հարկ է, որ հանրային հավաքին մասնակցող կամ ինչ-ինչ հանգամանքների բերումով (ծառայություն, հետազոտություն, պարզ հետաքրքրասիրություն եւ այլն) ներկա գտնվող անձինք տեղյակ լինեն, որ կարող են նկարահանվել, եւ եթե այդ փաստը նրանց համար անհարմարություն է ստեղծում, կարող են հրաժարվել հավաքին ներկա լինելուց: Նկարահանված լինելու պարագայում անձը կարող է խնդրել չհրապարակել իրեն պատկերող կադրերը: Այդ դեպքում լրատվամիջոցը կարող է ընդառաջել խնդրանքին, բայց պարտավոր չէ: Քննվող իրավիճակում «5-րդ ալիք»-ի թիմը Յուսանգ Հանին չնկարահանելու կամ նրան պատկերող կադրերը չօգտագործելու խնդրանք չի ստացել:
- «5-րդ ալիքի» սոցցանցային էջերում (Ֆեյսբուք, Յութուբ) դիմումատուի հասցեին երրորդ անձանց խտրական կամ վիրավորական մեկնաբանություններ չեն հայտնաբերվել, ինչը նշանակում է, որ այդպիսիք չեն եղել կամ խմբագրությունը մոդերացիայի է ենթարկել (հեռացրել է):
- Արձանագրելով, որ «5-րդ ալիքի» ռեպորտաժում Յուսանգ Հանի անձը ուղղակիորեն թիրախավորված չէ, Դիտորդ մարմինն, այդուհանդերձ, նկատում է հավաքի մասնակիցների հասցեին ռեպորտաժի հեգնական-անհարգալից տոնայնությունը: Տվյալ պարագայում, տարբերվող դեմքերը (ազգային, ռասայական, հագուկապի կամ այլ հատկանիշներով) կարող են ուշադրություն գրավել եւ խոցելի դառնալ՝ մանավանդ տեսակադրերի եւ տեքստի համադրությամբ: Այս իմաստով հատկանշական է, օրինակ, ֆեյսբուքյան օգտատեր Էդուարդ Մկրտչյանի էջում արված խտրական գրառումը եւ դրա տակ Յուսանգ Հանի հասցեին ռասայական խտրականություն եւ վիրավորանքներ պարունակող բազմաթիվ մեկնաբանությունները: Այսու, Դիտորդ մարմինը լրատվամիջոցներին հորդորում է հնարավորին չափ նրբանկատ ու զգուշավոր լինել՝ արտաքինով առանձնացող եւ դրա հետեւանքով խոցելի դառնալու ռիսկի ենթակա անձանց թեկուզ առանց դիտավորության չվնասելու համար: Արդեն հրապարակված նյութի նկարագրության մեջ կարելի է ամրագրել վերապահում, որ դրա վերաբերյալ ստացվել է բողոք,

նաեւ՝ կցել բողոքի առնչությամբ խմբագրության (լրատվամիջոցի էթիկայի հանձնաժողովի, օմբուդսմանի եւ/կամ ԴՄ) կարծիքը։

- Դիտորդ մարմինը հորդորում է «5-րդ ալիքի» էթիկայի հանձնաժողովին՝ քննարկել Յուսանգ Հանի հետ կապված միջադեպը սույն Փորձագիտական կարծիքի համատեքստում եւ մշակել հեռուստաընկերության լրագրողների համար որոշակի հանձնարարականներ՝ նման անցանկալի իրավիճակները հնարավորինս բացառելու համար։
- Դիտորդ մարմինը Յուսանգ Հանին իր ափսոսանքն է հայտնում նման տհաճ զարգացումների կապակցությամբ եւ հետագայում նմանատիպ խնդիրները բացառելու համար կնախաձեռնի խորհրդատվական աշխատանք լրագրողների շրջանում։
- Հաշվի առնելով, որ դիմումատու Յուսանգ Հանը Դիտորդ մարմնին ներկայացրել է ՀՀ իրավապահ մարմիններին հասցեագրված տվյալներ եւս, նաեւ՝ Կորեայի Հանրապետության պետական մարմինների հետ իր անձնական անվտանգությանը վերաբերող մտահոգություններին առնչվող նամակագրությունը, Դիտորդ մարմինը շեշտում է, որ դիմումը քննվել է միմիայն լրագրողական էթիկայի համընդհանուր սկզբունքներին եւ մասնավորապես՝ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրին համապատասխանության համատեքստում։

Ընդունվել է 2026թ. փետրվարի 6-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Վանաձորի «Լոռի» ՀԸ գործադիր տնօրեն
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Ampop.am-ի հիմնադիր խմբագիր
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
«Ալիք Մեդիա» լրատվական-վերլուծական կայքի հիմնադիր
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Իրավաբան
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
«Ցայգ» հեռուստաընկերության տնօրեն
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Հանրային հեռարձակողի խորհրդի անդամ
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Factor TV-ի գործադիր տնօրեն
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՄԱ մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 100-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում, 2024 թվականի մայիսի 18-ին: